


օգնությամբ կատարվում են ջրի մաքրման աշխատանքներ:

Այսպիսով՝ կասկած չկա, որ այս համակարգերը խաղալու են իրենց վճռական դերը նաև տիեզերքի նվաճման գործում, ինչը հույժ կարևոր խնդիր կդառնա ապագայում:

Գրականություն

1. Է. Ղազարյան, Հ. Սարգսյան, «Էլեկտրոնիկան երեկ, այսօր, վաղը»// Գիտության աշխարհում, N1, 16 (2008):
2. Է. Ղազարյան, Ա. Կիրակոսյան «Նանոհամակարգերի ֆիզիկա»// Գիտության աշխարհում, N1, 18 (2005):
3. Վ. Հարությունյան, Ս. Հարությունյան, «Սովորականի և անսովորի եզրագծում կամ ձեպանկար նանոտեխնոլոգիաների մասին»// Գիտության աշխարհում, N2, 19 (2005):
4. А. Мигдал, "Квантовая физика для больших и маленьких"// Библиотечка Квант, Наука (1989).
5. А. Шик, "Квантовые нити"// Соросовский образовательный журнал, N5, 87 (1997). ■

Ի ԴԵՊ...



Ամբողջ աշխարհի ատոմային ռեակտորները տարեկան օգտագործում են մոտավորապես 77 հազար տոննա ուրան: Դրա 60%-ը ստացվում է ուրանի հանքերից, իսկ 40%-ը օգտագործված վառելիքի վերամշակման արդյունք է*:

* Наука и жизнь, 2009, № 4.


ՓԱՐԻՍ ՓԻՇՄԻՇ

100



Հունվարի 31-ին լրացավ սփյուռքահայ անվանի գիտնական, Մեքսիկայի ազգային աստղադիտարանի պատվավոր աստղագետ, Մեխիկոյի համալսարանի պատվավոր դոկտոր Փարիս Փիշմիշի (Մարի Սուբիասյանի) ծննդյան 100-ամյակը: Լա առաջին կին աստղագետներից էր, ով ոչ միայն հասավ գիտական մեծ հաջողությունների, այլև խթանեց կին գիտնականների հետագա ակտիվությունը և մեծ դեր խաղաց ամբողջ մեքսիկական աստղագիտության զարգացման գործում: Ծնվել է 1911 թ. հունվարի 31-ին Կ. Պոլսում (Ստամբուլ, Թուրքիա): Սովորել է տեղի Սեմերձյան ձեմարանում և ամերիկյան վարժարանում: 1933 թ. ավարտել է Ստամբուլի համալսարանը, աշխատակցել այդ համալսարանի աստղադիտարանում: 1935-36 թթ. դասավանդել է Ստամբուլի Կեդրոնական Սանասարյան վարժարանում, ապա տեղափոխվել ԱՄՆ, որտեղ ավարտել է Հարվարդի համալսարանը և 1937 թ. ստացել մաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան: 1939-42 թթ. աշխատել է Հարվարդի քոլեջի աստղադիտարանում, 1942 թ. ամուսնացել է մեքսիկացի աստղագետ Ֆելիքս Ռեսիլասի հետ, տեղափոխվել Մեքսիկա և աշխա-

տանքի անցել Պուերթայի Տոնանցինտլայի աստղադիտարանում, որտեղ աշխատել է մինչև 1946 թ.: 1948-ից մինչև կյանքի վերջ (50 տարուց ավելի) աշխատել է Մեխիկոյի Տակուրայայի ազգային աստղադիտարանում, որը պատ-



կանում է Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանին: Գիտական աշխատությունները վերաբերում են Գալակտիկայի կինեմատիկային, միգամածությունների լուսաչափությանը և տեսագծային արագությունների որոշմանը: Կատարել է երիտասարդ աստղակույտների լուսաչափական առաջին ուսումնասիրություններն ու հայտնաբերել 3 գնդաձև և 20 բաց աստղա-


կույտ: Ուսումնասիրել է միջաստղային կլանման ազդեցությունն աստղասփյուռներում դիտվող աստղերի բաշխման վրա: Հրապարակել է ավելի քան 135



գիտական աշխատանք: Մեծ դեր է խաղացել աստղագիտական սարքերի ներմուծման և կիրառման գործում. առաքման միգամածությունների արագությունների դաշտի ուսումնասիրության նպատակով 1972 թ. Մեքսիկայում առաջին անգամ ներմուծել է Ֆաբրի-Պերո ինտերֆերոմետրիան: Նրա ամենակարևոր ներդրումներից էր մեքսիկական աստղագիտական ամսագրերի հրատարակության խթանումը (Տոնանցինտլայի և Տակուբայայի աստղադիտարանների տեղեկագիր, Աստղագիտության և աստղաֆիզիկայի մեքսիկական հանդես և այլն): Մեծ էր Փիշ-

միշի մանկավարժական գործունեությունը և նրա դերը մեքսիկական աստղագիտության զարգացման մեջ: Ղեկավարել է մի շարք ուսանողների, ովքեր հետագայում դարձել են ճանաչված աստղագետներ (ըստ էության, մեքսիկացի աստղագետների զգալի մասը): Փիշմիշը Միջազգային աստղագիտական միության, Ամերիկյան աստղագիտական ընկերության, Մեծ Բրիտանիայի Թագավորական աստղագիտական ընկերության, Մեքսիկայի գիտությունների ակադեմիայի և Մեքսիկական ֆիզի-

կական ընկերության անդամ էր: Վախճանվել է 1999 թ. օգոստոսի 1-ին:



Նյութը պատրաստեց Արեգ Միլեայեվսկանը